ության շաբքերում պիտի վնատրել հեղափոխա-
կան ավյուն։ Իսկ արդյունաբերական շրջաննե-
րում՝ աշխատանքի շահագործման պրոցեսում
դաստիարակված, տարիների ընթացքում կրակի
ու շոգիի առաջ խրոխտ կանգնած Հայաստանի
բանվորը — յերկրի ներսում թե ոտարության մէջ,
յերկաթուղու բուժերին կոթնած, թե պղնձի շա-
կի առաջ կարմրատակած, 100-ը վերստերի վրա
կարմիր-կանաչ ֆլագները ձեռքին՝ յերկաթուղու
գծերը կարգավորող, թե յերկրի խորքը փորող—
մինոյն ե՝ դարբնել եր գասակարգային շաղախի
միջ յուր միտքը, գիտակցությունը։ Յերկու այդ
միջավայրերում մնվել, զարգացել և Հայաստանի
բանվորական շարժումը՝ մեկ տեղ նա կանգնել
ե մասսայական շարժման զլուխ։ միւս տեղ,
ձուլվել ընդհանուր բանվորական ընտանիքի
ձգառություններին։ Նրա պայքարի յերերուն փորձե-
րը սկսվում են ՀՀ դարի սկզբից։ Տարուրե-
րություններ, պարառություն թե հաղթանակ՝ եղել են։
Ալահվերդին, Ալեքսանդրոսովը, Ղաթարը,
Թիֆլիսից Ղարս-Զուլֆա՝ վերից վար ձգվող յեր-
կաթուղին իրենց հազարավոր աշխատավորու-
թյամբ հանդիսացել են ու դեռ կմնան Հայաս-
տանի բանվորական շարժման լուսավոր կան-
թեղներ։

Հոկտեմբեր 23 թ.

BtP. UtUhp.

**) Պատմում յն, որ եթք Լոռվա ծորեսում կառուցված եք յերկաթուղարիծ, ընչափա գուլացիք բանաստեղծ Յով. Թումանեա-նի պիտի աղմուկ յեն բարձրացնում յեզ հողընդուռ շան- ի պիտի պատման աղմուկ, որ յերկաթուղին վասից քացից—ոչ դիմանում պատմաբանելով, որ նա կթալանի երենց շնորհ Լո- մի ոգուն չի բերելու նրան, վոր նա կթալանի երենց շնորհ Լո- մին, կլորութիւն նրա կուտանին անտառները.. Համարսականներ յեն կազմում, պիմու յն ուժ նարին ե, վոր երենց վլիս ճողանեն կայս փոքրանքը, նրա իերեն ու շառ: Յնանելով ոյնին պահան ճա- պահ փոքրանքը, նրա իերեն ու շառ: Յնանելով ոյնին պահան ճա- պահ տիկանը նրանք պիտի պահան ճապահ բան ու սրիշու շն Յով տիկանը նրանք պիտի պահան ճապահ բան ու սրիշու շն Յով:

ՅԵՐԵՔ ՏԱՐՎԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ

ՅԵՐԵՔ տարվա ընթացքում Խորհրդային իշխանության տնտեսական շինարարության գլխավոր առանցքն է յեղել գյուղատնտեսության և արդյունագործության վերականգնումն ու աստիճանական զարգացումը:

Հայաստանը գերազանցապես յերկրագործական յերկիր է. նրա ազգաբնակության $83,4\%$ կազմում և գյուղացիությունը. Հայաստանի գյուղատնտեսության մեջ գլխավոր տեղը բռնում է հացահատիկների կուլտուրան, սակայն բամբակագործությունը և այգեգործությունը նվազ նշանակություն չունին. Համաշխարհային պատերազմի և ազգամիջյան կոտորածների հետեւանքով գյուղատնտեսությունը զգալի կերպով քայլայվել եր. Կրամավել եր ցանքի տարածությունը, գյուղացիությունը զրկվել եր մեռած և կենդանի ինվենտարից, թողել բամբակի մշակոյթը, լքվել ելին այգիները:

Դաշնակցության իշխանության ժամանակ Հայաստանի ցանքսերի տարածությունը 1920 և 1921 թ. 115 հազար որավար եր. յեթե միջին բերքը հաշվենք յերեսուն փութ, նշանակում է, վոր գյուղացիությունը այդ տարիներին տարեկան 4 միլ. 45 հ. փութ հացահատիկ և ստացել, մինչդեռ Հայաստ. ազգաբնակության հացի մինիմալ պահանջն է (10 փութ տարեկան շնչին նորմայից յենելով) 12 միլ. փութ: Բամբակագործությունը, որ 1915 թվին Յերեվանյան նախկին նահանգում, ներառյալ նախկինի գավառը, տալիս եր $7,3$ միլիոն փութ սուքլու հումք բամբակ, կատարելապես ընկել եր, 20 և 21 թ. վոչ մի որավար բամբակ չեր ցանել գյուղացիությունը. նույն վիճակում եր և այգեգործությունը:

Գյուղատնտեսության վերականգման և սովոր յաղթահարման գլխավոր նախապայմանն եր ցանքի տարածության լայնացումը: 1922 թվին Խորհրդային իշխանությունը բաշխելով մոտ 300 հագար փութ սերմացու, հասցնում է ցանքսի տարածությունը մինչ $200,000$ որ. և 1923 թ. գարնանը ու աշնանը ավելացնում $10\%-ով$. ցանքսի տարածությունը աստիճանաբար լայնացնելով Խորհրդային իշխանությունը ձեռք է առնում միաժամանակ վոռոգման գործը: Հայաստանի վարելահողերի $1/5$ -ն է ջրվում վոռոգման նախկին ցանցով. մյուս $4/5$ -ը յենթակա է մթնութային կամայականության, և վորովհետեւ Հայաստանի կլիման չափազանց աղքատ է առաջանական տեղումներով, յերաշոը Հայաս-

տանի գյուղատնտեսության սովորական յերեվոյթն է: Խորհրդային իշխանության ձեռնարկած վոռոգման լայն աշխատանքի նպատակն է վոչ միայն վարելահողերը հաճախակի յերաշտից աղատ պահել, այլև ինտենսիվիկացիայի յենթարկել անջրդի հողերը և կուլտուրական բույսերի, գլխավորապես բամբակի մշակման լայն հնարավորություններ ստեղծել:

1921 թվի վերջից Խոր. իշխանությունը ձեռնարկում է նոր ջրանցքների կառուցման. 1922 թվի մայիսից սկսվում է Եջմիածնի ջրանցքի կառուցման աշխատանքը. և վերջանում 1922 թվի մայիսի 1-ին: Ջրանցքն ունի 21 վերստ տարածություն և ջրում է 3000 որավար չափազանց բերքի հողաշերտ. 23 թվի գարնանից ձեռնարկվում է Շիրակ ջրանցքի կառուցման, վոր յուր սկիզբն է առնում Արփաչայից, Ալեքսանդրովովովից 12 վերստ հեռավորության վրա. Ջրանցքն անցնում է $2^{1/2}$ վերստ տարածություն գետնի տակից, կարծը քարերի միջով, և Խորհրդային իշխանությունը փորում է այդ քարերի կուրծքը՝ Շիրակի ամայի գաշտերին ջուր տալու: Ջրանցքը հավանորեն պատրաստ կլինի 1924 թվի գարնանը և կծրի 25,000 որավար. Նա առաստ յելեկտրական լույս կտա Ալեքսովին, շրջակա գյուղերին և եներգիա՝ Ալեքսանդրովովում կառուցվող տեքստիլ գործարանին: 1923 թվի փետրվարին սկսվեցին Յերեվանի Մարքի ջրանցքի կառուցման աշխատանքները և ավարտվեցին մայիսին. այդ ջրանցքը ջրում է 1000 որավար քաղաքապատկան հողամաս և նրա հոսանքի վրա կառուցվում է այժմ Յերեվանի 5000 ձի ուժի յելեկտրական կայարանը. ձեռնարկված է եղջելլարի—(3000 որավար), Սարդարաբաղի փոքր ջրանցքի—(8000 որավար), և Արագգայանի խոշոր ջրանցքի ($15,000$ որավար) կառուցման: Բոլոր այդ ջրանցքները կառուցվում են Խորհրդային իշխանության միջոցներով. միայն Արագգայանի ջրանցքի համար Խորհրդային Ռուսաստանը նվիրել է $600,000$ ր. ոսկի:

Գյուղատնտեսության վերականգման կարեվոր նախապայմանն եր և գյուղացիությանը գյուղատնտեսական գործիքներ ու լծկան անսուններ մատակարելու հարցը: Հայաստանի գյուղացիությունը, գաշնակցական կառավարության որոք, 19-թվականին ուներ 42 խոտաքաղ 3 ցանող և 3 հնձող մեքենա. պրիմիտիվ, յերկրագործական գործիքների կիրառումը մի կողմից

պահանջում ե Հայաստանի գյուղացուց մեծ աշխատանքաժամանակամիջոց, մյուս՝ կողմից հողի արտադրողականության չափը պահում ե ստատիկ գրության մեջ. Հայաստանի կառավարությունը Խորհրդային Ռուսաստանից 1921 թվին ստանում ե 1000 յերկրագործական գործիք և բաժանում աշխատավոր գյուղացիության: 1923 թվից Հողգործկոմը միջոցների ե գիմում յերկրագործական գործիքների խոշոր քանակ ստանալ Ռուսաստանից և Գերմանիայից: Մյուս կողմից Յերևանում հիմնված մեխանիքական գործարանը պատրաստում ե և նորոգում յերկրագործական գործիքներ:

Հայաստանում զգացվում եր լծկան անսառների խոշոր պակաս: Մինչդեռ 1914թ. նախկին Յերեվանյան նահանգում կար 2,699,644 խոշոր և մասնը եղջյուրավոր անասուններ, 1922թ. այդ թիվը եջնում է 722,932ի, 1914թվին ամեն շնչին գալիս եր 0,6 խոշոր անասուն, 1919թվին արգեն 0,2, իսկ 1922 թ. 0,6. ուրեմն խոշոր լծկան անասունների թիվը 1922 թվին համառման գրեթե նախապատերազմյան նորմային. այդ պիտի բացատրել նրանով վոր մի կողմից 1921—1922 թվին պետությունը տվեց գյուղացիության 1500 գլուխ անասուն, մյուս կողմից գյուղացիության տնտեսության զարգացումը միջոցներ և տրամադրում լծկան անասուններ գնելու: Հողագործության վերականգնման հետ միասին հողային կոմիսարյատը ձեռնարկում է 1922 թվից հողաշինարարության լայն աշխատանքներին և հողագործկ գյուղացիության ամրացմանը հողին: Հողաշինարարական աշխատանքները գրեթե վերջացած են բոլոր գավառներում. հողին և ամրացված մոտ 100,000 գաղթականություն:

Հացահատիկային բույսերի հետ միասին Խորհրդային Հայաստանում 1922 թվից վերականգնվում են բամբակագործությունն ու այդեղործությունը: Մինչեւ 1920 և 1921 թ. վոչ մի որակար բամբակ չեր ցանված. 1922 թվի գարնանը ցանվում է 750 որակար. իսկ 1923 թվին 5,000 որակար. բամբակագործության վերականգման համար կառավարությունը դիմում է խրախուսական միջոցների. 1922 թվին բաց է թողնում գյուղացիությեան 40,000 ըուբի ոսկով վարկ, իսկ 1923 թվին Հայաստանի և Ռուսաստանի «Գրախու» բամբակագործական ընկերությունը տրամադրում է 150,000 ր. ոսկով վարկ: 1923 թվին Հայաստանը տալիս է 90,000 ֆութ բամբակ: 1918—1921 թ. ընթացքում Յերեվանի և Եջմիածնի գավառների այգիների տարածությունը, վոր 1914 թ. համառում եր 7761 որակար:

վարի, կրծատվում ե մինչեւ 6637 որավար. և 1922
թվի գարնանից այդ մակարդակը սկսում է լայ-
նանալ: Մյուս կողմից վերականգնվող գինու և
սպիրտի արդյունաբերությունը խթան է հանդի-
սանում այդիների ինտենսիվ մշակման:

թւ 1921—1923 թվի ընթացքում վորչափ
վերակենդանացել ե գյուղական տնտեսությունը,
այդ ցուց է տալիս միաժամանակ և պարեն-
տուրքի չափը այդ տարիների ընթացքում. 1921
թվին հավաքված է 100,000 փութ, 1922 թվին
600,000 փութ, իսկ 1923 թվին 750000 փութ.
1921 թվին հացահատիկների բերքն եր 4 միլ.
փութ 1922 թվին 8 միլիոն, իսկ 1923 թվին 9
միլիոն փութ:

Խորհրդային կառավարությունը տնտեսական շինարարության խոչոր մասը ծանրացնում ե և արդյունաբերության վերականգնման վրա, զոր կատարելապես մեռած եր Խորհրդային իշխանությունից առաջ: Անգործ եյին լեռնահանքերը, անգործ եր Ն. Շուստրվի գործարանը և միշտ մասը գործարաններ: Լեռնային արդյունաբերության գավառում ժողովրդական տնտեսության խորհուրդը մի կողմից հավաքում ե Ղաթարի հանքերի (Զանգեղուրում) ցրված ու կողալտված կայքը. իսկ յօրու կողմից գործի ձգում լոռվանախկին ֆրանսյական ընկերության պատկանող հանքերը. 1921թվից արտադրությունը վերսկսվում ե կոռվա պղնձահանքերում. սակայն խոշոր կապիտալի բացակայության պատճառով գժվար եր անմիջապես ձեռարկել պղնձի արտադրության, ուստի ժողովնախորհուրդը աշխատում ե արտադրել այն, ինչ հնարավոր եր եղած միջներով. գործարանները 1922թվի հունվարի ջոյներով. գործարանները մեկը արտադրում են մեկից մինչև հոկտեմբերի մեկը արտադրում են 88.550 փ. ծծմբային կալչեղան, 780 փութ պղնձե կուպարոս, 5.424 փ. ծծմբային թթվուտ., 872 կուպարոս, կարբիդ և այլն: Համաձայն 1922-23 նախականի կարբիդ և այլն: Համաձայն 1922-23 նախականի տարվա ծրագրի արտադրության չափը հաշվային տարվա ծրագրի արտադրության չափը պիտի լինի 200.000 փ. ծծմբային կալչեղան, 4.000 փ. պղնձե կուպարոս, 12.000 փ. ծծմբա թթվուտ, 2.400 փ. կարբիտ և այլն: Արտադրած այդ նյութերի մեծ մասը արտահանվում է Ռուսաստան և գլխավորապես Բաքու ու Հայաստանի ակտիվ առևտրական բալանսի ստեղծման նպատակում:

Պղնձահանքերից զատ ժողանախորհուրդը 21
թվից ձեռնարկեց և ազգայնացրած վեց գինու
ու սպիրտի գործարանների արտադրության։ Ազ-
գայնացրած բոլոր գործարանները կազմում են
մի տրեստ «Արարատ» անունով։ Մինչ խորհր-
դային իշխանությունը գրեթե անգործ այդ գոր-
ծարանները 1921—1922 նախահաշվային տար-

վա ընթացքում արտադրել են 35.000 դոլ գինի, 280.000^o ողու սպիրտ, 80.000^o ողի և ոեկտիֆիկացիոն սպիրտ — 130.000^o. 1922-23 թվին ավելի ծավալվել ե մանավանդ գինու արտադրությունը:

Խորհրդային կառավարությունը կարգի ձգեց նախկին Տեր-Գարբիելյանի կաշվե գործարանը, հիմնեց յերկրորդ կաշվե նոր գործարան. այդ յերկու գործարանի արտագրությունը աստիճանաբար զարգանալով բավարարում ե ներքին շուկայի պահանջը և արտահանության համար ավելցուկ տալիս: 1921 թվին հիմնվում ե Յերեվանում ծխախոտի գործարան, վորի արտադրությունը որական 150.000 ծխախոտ ե:

Այս ճյուղերից զատ ժողովագրությունը ձեռնամուխ յեղավ մեխանիքական գործարանի կազմակերպման և տեքստիլ գործարանի կառուցման. մեխանիքական գործարանը զբաղվում է յերկրագործական գործիքների նորոգությամբ, ջլբանցքների համար շյուղներ և մանր գործիքներ պատրաստելով: Խուսաստանի նվիրած տեքս-

տիլ գործարանի շենքը կառուցվում ե Ալեքսանդրոպոլում. գործարանը կարող է տալ տարեկան 40.000 վութ մանկածք և 10-12 միլիոն արշին հյուսվածք:

Հայաստանի բոլոր գավառական կենտրոններում կառուցվում են յելեքտրական կայարաններ:

Ուրվագծած տնտեսական շինարարությունը ապացուցում է, վոր յերեք տարվա ընթացքում Հայաստանի տնտեսական կյանքը զգալի հառաջադիմություն է ցոյց տվել և աստիճանաբար գեպի զարգացում է դիմում:

Խորհրդային իշխանությունը՝ կանգնած տընտեսական շինարարության ճիշտ ուղիների վրա, մեթոդիկ, ծրագրած աշխատանքով Հայաստանի աշխատավորության գոյավիճակի տնտեսական պայմանները փոխելով, տանում է նրան գեպի կուլտուրական կինցաղ:

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մեկ միլիոն 150 հազար բնակչություն ունեցող Հայաստանում կ. կուսակցության շարքերում հաշվում է 1865 անդամ և 2469 թեկնածու, որի 60% գյուղացիներ են: Կուսակցության ղեկավար կազմը ստորաբաժանվում է՝ Հանրապետության մաշտաբով աշխատող 43, գավառական՝ 169. յեթե մենք համեմատելու լինենք կուսակցության 23 թ. ղեկավար կազմը 21 թ. հետ, կտեսնենք, վոր ավելցել ե հանրապետական մաշտաբով աշխատող մոտ 30 ընկեր, իսկ գավառական մաշտաբով 90 աշխատող, ըստ վորի առաջ քաշված այդ 90 գաւառական աշխատողների 40%-ը նախնական կրթությամբ, կուսակցության բանվոր և գյուղացի անդամներ են:

Կենտրոնական և գավառական կոմիտեների ապարատները ամրացել են այդ ժամանակաշրջանի ընթացքում:

Կուսակցության աշխատանքի ծանրության կենտրոնը՝ գյուղի աշխատանքն է և կապը գյուղական մասսաների հետ: Կուսակցական 893 բջիջից 316-ը գյուղական ե:

Կուսակցության առաջ խնդիր է գրված տնտեսական նոր քաղաքականության շրջանակում ուստամատիրել գյուղական կազմակերպությունները նրանց սոցյալական կազմի տեսակետից:

Ամենուրեք սկսված է այդ աշխատանքը,

վորի ընթացքում պարզվեց, վոր անհրաժեշտ յերկու կազմակերպության մեջ պասսիվ և ավելորդ տարրի գտում կատարել:

Մի կազմակերպության մանրամասն ուսումնասիրությունը ցոյց տվեց, վոր 130 անդամից 40%-ը պլրուետարակոն ե, 44%-ը տնտեսապես հարստանալու նշաններից ազատ, իսկ 11%-ը հարստանալու ձգտումներով. վերջին կատեգորիայից 4%-ը յուր տնտեսական գրությամբ հավասարվում է գյուղի միջին բունցքային տարրին: Զաման հետ զուգընթաց գյուղական կազմակերպությունների թեկնածուների առողջ տարրը անդամ է փոխադրվում:

Գյուղում տարվելիք կուսակցական աշխատանքը ուժեղացնելու նպատակով բացված են գյուղական բնիծների յերկամյա կուրսեր, վերոնց փորձը փայլուն արդյունքներ տվեց գյուղի աշխատանքը ամրացնելու տեսակետից:

Բնիծների կապը գավառական կենտրոնների հետ բավական ամուր է: Նրանց խոշոր մասը զգալի յեռանգ ու նախաձեռնություն է յերեվանից բերում գյուղական շինարարության ասպարիզում, կառավարության ղեկետների, կարգադրությունների պարզաբնության, կրթական գործի կազմակերպման խնդրում: Գյուղական բջիջները ստանում են «Մաճկալ» թերթը (գյուղացիական), նրանց տարրական անդրագի-

տությունը վերացված ե 810-ով և կուսակցության փորոշմամբ 3-րդ կուսակցական համագումարին վոչ մի անգրադեռ ընկեր չպիտի լինի:

Քաղաքային բճիճների աշխատանքը ավելի ակտիվ ե շնորհիվ աշխատանքի ավելի լայն հնարավորությունների և կազմակերպությունների միակերպության: Համեմատաբար ավելի արդյունավետ են աշխատում մարքսիստական խրմակները թվով 25, վորոնց ժողովների միջին թիվը ամսվա ընթացքում՝ 3 եւ: Ամեն մեկ խմբակի անդամների թիվը 33 եւ: Կազմակերպությունը բանվորական 26 բճիճ ունի, վորոնցից 22-ը երկաթուղագծի վրա: Կուսակցական աշխատանքը գծի վրա տանում ե կենտրոնական կոմիտեյին կից աշխատող տրանսպորտային բաժինը յուր հրահանգիչների կազմով: Այս բաժինը մշակում ե ծրագիր, աշխատանքի մեթոդներ գծի բճիճների համար,

Բանվորների ընդունելությունը կուսակցության մեջ դյուրացնելու նպատակով աշխատում է հատուկ յանձնաժողով, վոր անդամ և փոխադրել 130 թեկնածու և ընդունել 150 նոր թեկնածու: Երկաթուղային բանվորների ձգտումը դեպի կուսակցությունը չափազանց զգալի եւ: Հավանութեն մոտ ապագայում կհաջողվի կուսակցության պրոետարական մասը հասցնել 30%ի: Կուսակցության 80%ը կանոնավոր հաճախում

ե ընդհանուր ժողովներին, վոր բաց են և անկուսակցականների առջեվ: Անկուսակցականների թիվը կուսակցական հաճախողների նկատմամբ 50% է համարում: Անկուսակցական զանգվածների այն իներտ վերաբերմունքը դեպի քաղաքական և տնտեսական կյանքը, վոր հատուկ եր անցյալում—վերանում ե:

Այս ասպարեզում և ընդհանրապես գյուղական շրջաններում կոմմունիստական Յերիտասարդական Միության (կոմսոմոլի) դերը անգնահատելի եւ: Կոմերիտը աճել է մինչեւ 7000-ի նրա ապարատները թարմացել են նոր և պատրաստի ընկերներով: Կին բաժինը նմանապես տանում ե իր աշխատանքը:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր կոմմունիստական կուսակցությունը ամենից առաջ խոր հիմքեր ե ձգել գյուղական լայն զանգվածների շրջանում բարձրացնելով, վոչ միայն նրա քաղաքական ակտիվ գիտակցությունը, այլ և նրա կուլտուրական առաջադիմությունը: Ներկա գյուղը բոլորովին նման չե անցյալի ստրկացած գյուղին: Իսկ վոր ամենազլիսպորն եւ կոմունիության կուսացկության այս աշխատանքները նմստական կուսակցությունը դեկավարում են բանվորները, վոր փաստորնեն դեկավարում են բանվորները, վորոնց թիվը տարեց տարի բարձրանում եւ:

N.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Հայաստանի խորհրդայնացման մոմենտին յերկի վողջ ժողովրդական տնտեսությունը իր բոլոր կողմերով հիմնովին քայլայված վիճակում եր գտնվում:

Հայաստանի առանց այն ել թույլ կոռպերացիան, գեռ դաշնակցականների տիրապետության որոք, անվերջ ազգամիջյան կոսորածների և 1918—1920 թվերի տաճկական արշավանքների հետևանքով միանգամայն կործանման եր հասել: Խորհրդային իշխանությունը Հայաստանի կոռպերացիան գտավ իրեւ մի մեռած դիակ:

Հարկավոր եր գերազոյն ջանքեր, մեծ զոհաբերություններ՝ Հայաստանի կոռպերացիան վոտի կազմեցնելու, այն կազմակերպելու համար:

Յեվ իրապես Հայաստանի Խորհրդային իշխանության ամենալուրջ մտահոգության և հատուկ ուշադրության առարկաներից մեկը դարձավ կոռպերացիան:

Հայաստանի կոռպերացիայի յերեք առավագացման ընթացքը ըստ ամենայնի կարելի յեր բաժանել յերեք շատ վորոշ շրջանների:

Առաջին՝ Զինվորակ կոմունիզմի շրջան, յերկրորդ՝ յերկարատև ու ծանր տագնապ, և յերրորդ՝ խոքնակազմակերպման և վերաճնուղի շրջան:

Խորհրդային իշխանությունը իր տիրապետության առաջին շրջանում յերկրի մեջ չգտնելովայլ հարմար տնտեսական կազմակերպությունները, իր տնտեսական քաղաքականության ըները, իր առաջարկական գործության նոր կազմ, տալով թացքում աշխատեց առավելապես հիմնվել կոռպերացիայի վրա:

Կառավարությունը դեկրետի ձանապարհով հաստատեց Հայաստանի կոռպերացիայի կոմունիզմի հետ տնտեսության Հայկոպի վարչության նոր կազմ, տալով վերջինին աշխատելու բոլոր հնարավորությունները:

Վարչությունը իր աշխատանքները սկսելու համար կառավարությունից ստանում ե պատկառելի գումարներ, արտաքին աշխարհի հետ տնտեսական կապ պաշտպանելու գործը նույնպես հանձնվում է Հայկոպին, տալով նրան յերկաթուղային և այլ արտասովոր արտօնություններ: Իսկ յերկրի ներսում ապրանքափոխանակության ամ-

բողջ գործը պետական մաշտարով դարձյալ հանձնվում ե Հայկոպին:

Հայկոպը միանգամից դառնում ե յերկրի ամենախոշոր, պատկառելի ու հարուստ կազմակերպություններից մեկը:

Իրեն վրա գրված պետական պարտականությունները կատարելու համար՝ Հայկոպը իհարկե չուներ տեղերում և վոչ մի իսկապես կոռպերատիվ կազմակերպություն։ Այդ պատճառով մենք ականատես ենք լինում մի չտեսնված յերկոյթի։ Հայկոպի վարչությունը ամենայն շտապողականությամբ, շատ տեսնդու կերպով, առանց հաշվի առնելու իր քայլերը, սկսում ե ստեղծել քազմաթիվ մարմիններ, թե յերկրի ներսում և թե յերկրից դուրս։

Յերկրի ներսում կազմակերպվում են 12 զավառական կենտրոններում բաժանմունքներ, 120 ապրանքափոխանակության խանութներով, իսկ յերկրից գուրս՝ Թավրիզում, Պոլսում, Բաթումում, Սուխումում, Թիֆլիզում, Բագվում, Ռոստովում, Խարկովում և այլ տեղերում կազմակերպվում են գրասենյակներ, ներկայացչություններ բավականին զգալի շտատներով։

Հայկոպը այդպիսով դառնում ե վոչ միայն համահայնաստանյան, այլ և միջազգային կազմակերպություն։

Հայաստանի կոռպերատիվ ասպարեզ նետվում են և հայտնի կոռպերատորներ և միանգամյան անհայտ, կոռպերացիային ոտար, բայց լայն նախաձեռնությամբ բազմաթիվ գործիչներ։

Այդ շրջանում Հայկոպին իհարկե հաջողվում ե վորոշ գործ կատարել։ Բավականաշատի քանությամբ գրսի աշխարհից ապրանք ե ներմուծվում յերկիր, իսկ յերկրի ներսում ապրանքափոխանակության գործը կառավարության նախատեսած սահմաններում, մինչեւ 65 ٪-ի չափ հնարաւոր ե լինում իրագործել։ Կազմակերպվում են մի քանի արժեքափոր ձեռնարկություններ, ինչպես ծխախոտի պլանտացիան և ծխախոտի գործարանը, վորոնք այժմ ել ներկայացնում են մեծ արժեք Հայաստանի համար։ Կոմունիստական կուսակցությունը և իշխանությունը չափազանց զբաղված լինելով միանգամյան քայլայված, քաղցած յերկրի վիճակի անորինությամբ, կոռպերացիայի այդ շրջանի գործունեության նըկատմամբ հարկավոր ազգեցություն և անմիջական դեկավարություն հնարաւորություն չեն ունենում յերեան համեր։

1922 թվականի սկիզբներին Հայկոպի մեծացած, ուռացած մարմինը սկսում է ճեղքած ներ տալ։

Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականությունը զինվորական կոմունիզմի շրջանից անցել եր արդեն նոր տնտեսական, քաղաքականության շրջանը. վերջ ե տրվում անհաշիվ, անտնտես գործունեության ու հրապարակ ե քաշվում տնտեսավարության չոր ու հրամայողական լողունգը։

Կոռպերացիային 1921 թ. յունիսի 3-ի գեկրետի հիման վրա տրվում ե անկախ գործունեության հնարավորություն։

Մյուս կողմից ել պետական տնտեսական կոմիսարիատները սկսում են հաշվի նստել Հայկոպի հեշտ իրենց տված փողի յել ապրանքների նկատմամբ։

Այսպիսով Հայաստանի կոռպերացիայի համար սկսվում ե հաշվեհարդարի ծանր ու պատասխանառու շրջանը։

Հայկոպը սկսում ե ապրել յերկարատև տագնապ։

Հայկոպը գործելու նախկին հնարավորություններից և արտոնություններից զրկվում ե, Նրա բազմաթիվ մարմինները հսկայական շտատներով թե յերկրի ներսում և թե յերկրից գուրս մատնվում են անգործության ու դառնում միանգամյան վնասակար, գեֆիցիային հիմնարկություններ, Հայկոպի վարչությանը չի յաջողվում այդ բոլորը արագ կերպով լիկվիդացիայի յենթարկել, վորոնց յետագա գոյությունը Հայաստանի ինքնազործունեության դիմող մասսաների համար դառնում ե անհանդուրժելի։ Առաջ ե գալիս կուսակցական, արհեստակցական ու խորհրդային մարմինների կողմից լուրջ քննադատություն և գժգոհություն։

Վերջի վերջո վերհիշած մարմինների ձեռք առած մի շարք բարենորոգումների շնորհիվ Հայկոպի վարչությանը, 1922 թվի վերջերից և 1923 թվի սկզբին, հաջողվում ե հարվածային կարգով անցնել Հայաստանի կոռպերացիայի վերակարգության գործին։

Այսպիսով Հայաստանի կոռպերացիայի համար 1923 թիվը հանդիսանում ե իրապես ինքնակազմակերպման և վերածնության շրջան։

Շատ կարճ ժամանակամիջոցում վարչությունը լիկվիդացիայի ե հնթարկում առանց բացառության վեր հիշած բոլոր արտասահմանյան գրասենյակները, հավաքելով յեղած դոյլը ու կարողությունը Յերեան։ Իսկ յերկրի ներսում գտնվող բաժանմունքները յենթարկվելով լիկվիդացիային բանց ակտիվ-պատիվը հանձնում են նոր կազմակերպուղ միանական կոռպերատիվներին։

Բացի այդ լիկվիդացիայի են յենթարկվում Հայկոպի նաև այն արդյունաբերական ձեռ-

Նարկությունները, վորոնք իրենց ամբողջ գոյության ընթացքում միայն մասս են պատճառել վերջինին։ Դրանք են Հարաքիլիսայի, Շահալու լուծկու, սուրճի և մեքենայական գործարանները։ Կրծատման յեն յենթարկվում նաև կենտրոնի 200-ից ավելի ծառայողները, վորոնց թիվը հասցվում է մինչև 40-50 հոգու։

Հայկոպի ապարատի արագ և վճռողական լիկվիդացիան Հայաստանի կոռպերատիվ լուրջ շինարարություն։ Բոլոր գավառական քաղաքներում, ինչպես ասացինք, կազմակերպվում են միասնական կոռպերատիվներ՝ հիմք ընդունելով գեռեւս 1922 թվից գոյություն ունեցող բանկոպները, վորոնք տնտեսապես ճիշտ են շատ թոյլ, բայց կոռպերատիվ տեսակետից միակ միակարական և առողջ սաղմերն եյին հանդիսանում կոռպերացիայի ապարագա զարգացման համար։

Միասնական կոռպերատիվները հաջող կերպով մկանում են ծավալել իրենց գործունեությունը։ Կազմակերպվում են կոռպերատիվներ նաև մի շաբթ տնտեսապես ուժեղ գյուղերում։ Կոռպերատիվ շինարարությունը այնքան է առաջ գնում, վոր Հայկոպի վարչությունը 3—4 ամագա ընթացքում կարողանում է նախապատրաստել և մայիսի 5-ին հրավիրել, Խորհրդային Հայաստանի գոյության ընթացքում առաջին անգամ, համահայաստանական կոռպերատիվների համագումար։

Համագումարի աշխատանքները անցնում են հաջող և ունենում են մեծ նշանակություն կոռպերացիայի ապարագա ուժեղացման համար։

Համագումարին մասնակցում են համարյա Հայաստանի բոլոր ծայրամասերից։ Զանգեղուր, Ղափան, Սիսիան, Դարձալազյաղ Մեղրի և մնացյալ բոլոր գավառները։

Համագումարը Հայկոպի վարչության վերջին դործունեությունը համարելով միանգամայն բավարար՝ ընդգծում ե կոռպերատիվ շինարարության նոր ուղիներ և ընտրում նոր վարչություն։

Համագումարից հետո Հայաստանի կոռպերացիայի զարգացման և ուժեղացման համար լի մեծ հնարավորություններ, ավելի մեծ հնարավորություններ։

Տեղերում ուժեղ կերպով բարձրանում ե ընկերների և լայն մասսաների ինքնազործունեությունը կոռպերատիվ աշխատանքների ասպարե-

զում։ Կոռպերատիվ ղեկավարող մարմինների մեջ մտնում են կուսակցական և արհեստակցական պատամխանատու գործիչներ, մինչդեռ առաջ կոռպերացիան վերջինների համար հանդիսանում եր քննադատության առարկա միայն։

Այսուհետեւ կուսակցական, արհեստակցական և խորհրդային մարմինները, տեսնելով, վոր կոռպերացիան սկսում ե ներքեից կազմակերպվել և ստանում ե մասսայական բնույթ, դարձնում են այս իրենց մաքսիմում ուշադրության առարկան։ Պարբերական մամուլում կոռպերատիվ հարցերին տալիս են մեծ տեղ, կազմակերպվում են Հայաստանի մաշտաբով կոմպանիաներ, ու այդ ամենը նպաստում, ոժանդակում են կոռպերատիվ աշխատանքների անարգացման։


Հայկոպի վարչությունն ել իր կողմից չի խնայում վոչ մի միջոց կոռպերատիվ գործը ուժեցնելու համար։

Այսոր կազմակերպչական - հրահանգչական զգալի աշխատանքներ են կատարվում։ Յեղած միասկոռպաններից բացի կազմակերպվել են նորից մի քանի տնտեսական խոշոր նշանակություն ունեցող կենարուներում։ Աշտարակում, Դուրսում, կոտայքում և ուրիշ տեղերում - նոր միասկոռպաններ, ու գյողկոռպաններ։ Այդպիսով կոռպերատիվներից զանցը զգալիորեն ծավալվել է մեզարատիվ ցանցը զգալիորեն ծավալվել մատչելի գրականում։ Սկսած ե կոռպերատիվ մատչելի գրականում հրատարակության գործը։ Մինչև որս նույն աեսել յերկու համար «Հայաստանի կոռպերացիա» մեծածավալ ամսաթերթերը, Համահայաստանական կոռպերի սամագրում աղաղիր արձակությունը առանձին գրքով, Ալեք-պոլում նազարեական գրքով, Առաջարկում առանձին գրքով, Առաջարկում հրատարակված ե «կոռպերացիա» բրոշյուր, ուր հրատարակված են ընկ. ընկ. կենինի և Մեշերյակողետեղվածները։ Տպագրության են արքած մի շաբթի գործնական հարցերի շուրջը նոր գրքեր։

Առևտրական շրջանառության տեսակետից, կարելի է արձանագրել շատ զգալի առաջադիմություն։ թե կենարունի և թե մանավանդ միասկոռպանների ապրանքային շրջանառությունը ավելացել է 5-ից մինչև 20 անգամ։

Ուշադրության արժանի ե նաև այն, վոր Հայկոպի վարչությունը հնարավորություն ե ունենում գնել ծխախոտի գործարանի կեսը, վոր պատականում եր մասնավոր անձանց և գործարանը դարձնել լրիվ սեփականությունը Հայկոպի։

Ծխախոտի պլանտացիան, վոր Հայաստանի գյուղատնտեսության կուլտուրացման տեսակետից ունի խոշոր նշանակություն և խոստանում է մեծ ապարագա և ծավալվում։ Բացի Զարբարի հողամատելի ե ծավալվում։ Բացի Զարբարի հողամատելի և ծավալվում 30 գեայտին ցանած ծխախոտից, Յերբում



36359-66

բևան քաղաքի Հայկոսպի այգուն կից ստացւած 100 դեսյատին նոր հողամասից 50 դեսյատինը հատկացվում ե նորից ծխախոտի մշակության համար:

Անշուշտ Հայաստանի կոռպերացիան դեռ համեմատաբար նոր կազմակերպություն ե, սա-

կայն նրա այսորվա զարգացման ընթացքը գրավական ե այն բանի, վոր Խորհրդային Հայաստանի տնտեսական վերաշինության գործում կոռպերացիան կդառնա ամենախոշոր գործոններից մեկը:

Պ. Ստամբոլյան

ԼՈՒՍՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշխատավոր մասսաների կրթալուսավորչական գործը Հայաստանում լուրջ հողի վրա և դրվում ու դառնում պետական հարց միմիայն 20 թվին, Հայաստանի խորհրդայնացումից հետո: Դաշնակցական իշխանությունը կուսավորության կոմիսարյատին ժառանգություն թողեց տանյակ հազար մերկ, քաղցած, անգրագետ վորքեր, դպրոցների ավերակ շենքեր և մեծ մասամբ տգետ ու բարոյագես այլասեռուած ուսուցչություն: Այդպիսի պայմաններում կուսաժողկոմատը ձեռնարկեց աշխատանքի. անցել ե յերեք տարի. Կրթական գործի համար շատ կարճ ժամանակաշրջան ե այս. սակայն այդ կարճ ժամանակում, շնորհիվ վորոշ կանխամտածված ծրագրի, հարվածյին տենդոտ աշխատանքի, արժմ Հայաստանում ստեղծվել ե մի այնպիսի կրթական շրջան, վորի վրա արժի կանգ առնել: Հայաստանի կուսաժողկոմատի աշխատանքները մասսաների մեջ տարվում են յերեք որգանների միջոցով՝ սոցդասպլիսվարի (սոցյալական դաստիարակության գլխավոր վարչություն), քաղլուսպլիսվարի (քաղաքական լուսավորության գլխավոր վարչություն) և արհդաստակրթության գլխավարի. առաջինը իր աշխատանքը տանում ե մանուկների և պատանիների շրջանում, յերկրորդը՝ հասակավորների և յերլորդը նպատակ ունի արհեստակցական դպրոցներ բարձր տիպի դարձնելով, յերկրին տալ պիտանի զարգացած, զիտակից մասնագետ-աշխատավորներ: 1923 թվի մայիս ամսվա (1922-23 ուսումնատարվա) թվերի համաձայն սոցդասպլիսվարը ունեցել ե դպրոցական հետեւյալ ցանցը.

565 դպրոց, վորից 9 մանկապ.

547 դպր. I աստ.

9 " II "

Աշխատաների թիվը յեղել ե՝ 48,747, վորից՝

15240 աղջիկ

33507 տղա

Հստ ազգությունների դպրոցների թիվը ե յեղել՝

Հայկ.— 485

Ռուս.— 24

Թուրք.— 40

Հունակ.— 4

Ցեղիդ.— 7

Ասորի— 5

Աշխատաները ըստ ազգության բաժանում՝

Հայ— 44,724

Ռուս— 1799

Թուրք— 1497

Ցեղիդ— 267

Ասորի— 198

Հուն— 229

Այլ— 39

Դաստունների ընդհանուր թիվը՝ 1270

Հստ կրթական ցենզի՝

Բարձրագ. 133

Միջին կրթ. 654

Ստորին 483

Հստ ազգության

Հայ— 1184

Ռուս— 38

Թուրք— 33

Ասորի— 4

Հուն— 7

Ցեղիդ— 2

	Մանկապ.	I դպր.	II դպ.	Ընդ.
Յերեւ. գավ.	2	95	3	100
Եջր.	1	79	1	81
Ամերակ.	3	111	1	115
Չարաց.	1	27	1	29
Լոռի.	—	54	1	55
Դիլիջ.	—	49	1	50
Նոր Շայազ.	2	37	1	40
Դարաւագեազ.	—	27	—	27
Զանգեզուր.	—	51	—	51
Մեղրք.	—	17	—	17

Սոցդասպլիվարը Յերևանում ունի նայել
մի ցուցադրական մանկապարտեղ 75 յերեխ.
համար, 4 դաստիարակով, և մի ցուցադրական
դպրոց 149 աշ. համար:

Բարոյապես դեֆեկտիվ յերեխաների հա-
մար կազմակերպված ե գաղութ, ուր կան 41
յերեխ. 6 դաստիարակի ղեկավարությամբ:

Հայաստանի Լուսողիկոմատը Յերևանում և
դավանելի մանկատներում պահում ե իր
հաշվին 4000—5000 վորեր: Դպրոցական պա-
րապմունքներից զատ մանկատներում կազմա-
կերպված են զանազան արհեստանոցներ (վու-
կերչական, կոշկակարական, կավագործական,
զամբյուղագործական, կազմարարական, կարու-
ձեկի դպրոց և կուրսեր) ուր յերեխաներն աշխա-
տում են արտադպրոցական ժամերին:

Ամերիկյան ոգնության կոմիտեն Հայաս-
տանում պահում ե 21,835 վորբ 1—17 տար-
համակի: Ամերիկական մանկատների դպրոցնե-
րում ել պարտադիր ե միասնական աշխատանքի
դպրոցի ծրագիրը:

Դաստուների գիտական մակարդակը բարձ-
րացնելու և աշխատանքի դպրոցի նորագոյն
մեթոդների հետ ծանոթացնելու համար՝ ամառ-
ները տեղի յեն ունենում մանկավարժ. կուրսեր,
կոնֆերանսներ:

Յերևանում կա մանկավարժական ինստի-
տուտ, վորը պարբերաբար տալիս ե պատրաստ-
ված կադր յերիտասարդ դաստիարակների: 37
ուսանող կար անցյալ տարի, 13 դաստիարակ:
Հարուստ և խնամքով կազմված ե Յերեվանի
մանկավարժական թանգարանը, վորից ոգտվում
են Յերևանի բոլոր դպրոցները. բացի այդ,
թանգարանը գործիքներ ե պատրաստում դավա-
ռական լուսբաժինների, գյուղական դպրոցների
համար: Հայաստանում բոլոր դավառ. կենտրոն-
ներում, նոյնիսկ շատ գյուղերում կան պատ-
կոմական կազմակերպություններ (պատահի կո-
մունիստ):

Հայաստանի պատկոմակ. կազմակերպու-
թյունը խոր արմատներ ե գցել պատանիների
ըջաններում:

Սոցդասպլիվարը կենտրոնում հրատարա-
կում ե «Պատկոմ» ամսաթերթը:

Արհեստ. կրթության ղլիս. վարչության
հիմնարկներն են՝ (վորոնց մեծ մասը կենտրո-
նում են գտնվում):

1. Տեխնիկումներ՝

Յերեվանում,

Ալեքպուլում,

Ոշականում:

2. Տեխնիքական կուրսեր.
3. Նկարչական դպրոց.
4. Յերաժշտական ստուդիա.
5. Կոշկակարական արհեստանոց.
6. Զեռարվեստի դպրոց.
7. Կար ու ձեվի կուրսեր.
8. Կազմարարական արհեստանոց (վոր վեր-
ջերս հանձնվել ե Պետհրատին):

Պետական համալսարանը հետեւյալ ֆակու-

տեատրներն ունի՝

1. Գյուղատնտես.	—	80	ուսան.
2. Պատմա-գրական	—	99	»
3. Բժշկական	—	133	»
4. Տեխնոգիական	—	56	»
5. Հասարակագիտ.	—	113	»

Ըստ թիվը աղատ ուկնդիրներով 490

(Այս տարի թիվը համառ մօտ 1000 ի)

Բանվորական ֆակուլտետը. 3 բաժանմուն-
քներում ունեցել ե 340 ուսանող:

Համալսարանի գրադարանը ունի մօտ 50000
գիրք զանազան լեզուներով: Կենտրոնական Հան-
րային գրադարանը ունի նոյնպես մոտ 50000
գիրք:

Կա հարուստ մատենադարան Եջմիածնում
ձեռագրային ճոխ մասով:

Պետական խոշոր հիմնարկներից ուշադրու-
թյան արժանի ե կենտրոնական թանգարանը,
վորի աղգագրական մասը և նկարչական սրահը
բազմաթիվ այցելուներ են գրավում. թանգա-
րանին կից գտնվում ե Հեղափոխության թան-
գարանը:

Պետհրատը բաժիններ ունի Մոսկվայում,
Պոլսում:

Ք Ա. Ղ. Լ Ո Ւ Վ Ա Ր Ը

Ըստ յերեվոյթին Գլխադրուսվարը դեռ ու-
ժեղ և մշտական կապ չի ստեղծել լայն մաս-
սաների հետ: Միջոցների սոլության և աշխա-
տակիցների պակասության պատճառով քաղ-
լուսվարի աշխատանքը մինչև այժմ այնքան
խորացած չի յեղել:

Գլխադրուսվարը անզրագ, վերացման կա-
յաններ և կիսագրագետների խմբակներ ունե-
ցել ե՝



Հա 466

100 համար:	Հ.	Թ.	Թ.	Ընդ.	Դաս թ.	Ունկնդ թիվ
Համար:						
Ան	30	—	5	95	86	2000
Հեմքառ	90	—	—	90	81	1014
Դիմչան	21	—	3	24	20	300
Ա. Բայազետ	34	—	3	37	37	740
Եղմիածին	25	—	1	26	23	580
Լոռի	40	2	3	45	45	600
Դարացիլսա	9	—	—	9	9	150
Մեղմի	12	—	—	12	12	200
Զանգեզուր	—	—	—	—	—	—
Դարաւ	22	—	3	25	25	350
Կենտր. ուղղել տուն	1	1	1	3	3	97
	344	3	19	336	341	6031

Ակումբներ — 31 համ

Գրադարան — ընթերց-

յարաններ 54

Ժողովրդական տներ 2

Թատրոն. բեմ — 90

Խրճ. ընթերցարաններ 223

Կինո — 4

Քաղղուսվարը աշխատանքներ և տանում կոմ-
յերիտասարդների, կանանց, կարմիր բանակա-
յինների, պրոֆմիության և գյուղացիների մեջ:

Լուսժողկոմատը, յուր համար վորոշ տնտե-
սական բազա ամրացնելով և ստեղծելով աշխա-
տակիցների համապատասխան կադր՝ մոտակա-
տարիների ընթացքում կը իրագործի թե աշխա-
տավորության քաղաքական կուլտուրական և թե
մատադր սերնդի դաստիարակության զարգացման
ծրագիրը:

Սերիկ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խուսաստանի Լուսժողկոմատի կովկասիան
ազգային փոքրամասնութ. Խորհրդին կից հաս-
տատել ե հայկական կուլտուր. գործերիներկայաց-
չություն: Խուսաստանի Հայկական գաղութների
կուլտուրական բոլոր պետքերի համար դիմել՝

Մոսկվա, Հովհաննես պատուի ՀԿՊ (Սրբության,
Յոշկով պետք) Սերիկ Դավթյան:

ԽՄԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ

3555

2013

